«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր

_____ Վ.Է.Հարությունյան
3 սեպտեմբերի 2021թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Արծրունի Էդվարդի Վարդանյանի «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Մասնակցում էին՝ Վլադիմիր Հարությունյան՝ *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ.*, Ռոբերտ Սարինյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ*, Տիգրան Հարությունյան՝ *տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ*, Քրիստինե Բաղդասարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ*, Մերի Մանուչարյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Սվետլանա Դալլաքյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Լիլիթ Սարգսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Բելլա Գաբրիելյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գևորգ Հարությունյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Տաթևիկ Փարսադանյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Գրիգոր Մանուկյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*, Շողեր Պողոսյան՝ *տնտեսագիտ. թեկնածու*

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների գործարար ակտիվության բարձրացման, տարածաշրջանային ներդրումային գրավչության ապահովման հիմքում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման հիմնախնդիրների բացահայտումն է և լուծման ուղիների

առաջքաշումը: Թեմայի արդիականությունը պահանջում է հետազոտական աշխատանքի արդյունքներով մշակել ուսումնասիրվող համակարգերի զարգացման հիմնախնդիրների լուծման տեսական դրույթներ և կատարելագործման մեթոդական հիմք, որում էլ դրսևորվում է ատենախոսության հիմնական գիտական նորույթը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ, դրա գնահատման գործընթացի՝ տասնամյակներ շարունակ վիճահարույց մնալու հանգամանքով: Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության վերաբերյալ կատարված հետազոտությունը կոչված էր ապացուցելու, որ գործող համակարգերը չունեն արդյունավետության գնահատման ենթահամակարգ, ինչն էլ կառուցակարգվել և ներկայացվել է աշխատանքի երկրորդ և երրորդ գլուխներում: Ենթակառուցվածքների արդյունավետությունը ստուգելու նպատակով մեր կողմից կիրառվել է Արդյունավետության հիմնական ցուցանիշը /այսուհետ՝ KPI / Key Performance Indicator/:

Արդյունքում միջազգային չափումների համատեքստում մշակվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), որի միջոցով գնահատվել է Հայաստանի դիրքը՝ որպես ելակետային տվյալներ ընդունելով GEI (Global Entrepreneurship Index/Գլոբալ ձեռնարկատիրության ինդեքս) ինդեքսում ներառված ենթակառուցվածքային տարրերը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի ներկա վիճակի ուսումնասիրությունն է, առկա հիմնախնդիրների բացահայտումը, միջազգային փորձի ուսումնասիրման հիմքով այնպիսի ինդեքսի մշակումը, որով կգնահատվի ինչպես ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության ընդհանրական մակարդակը, այնպես էլ արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության մակարդակը, արդյունքում կմշակվեն գիտագործնական առաջարկներ, որոնք կնպաստեն ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացմանը՝ ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող հանգամանքների վերացման միջոցով:

Այդ նպատակի իրացմանը հետամուտ լինելով ատենախոսությունում փորձ է արվել հետազոտել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը և ներկայացնել դրա հիմնական բաղադրիչները, ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, ուսումնասիրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման միջազգային փորձը, վերլուծել ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակը և առանձնահատկությունները, վերլուծել արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների արդի վիճակը ՀՀ-ում, հետազոտելով միջազգային պրակտիկայում առկա ինդեքսները՝ մշակել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման AIP ինդեքսը, անցկացնել հարցում՝ պարզելու համար ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները, առաջադրել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման ուղիներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում ստացված արդյունքները համահունչ են առաջադրած խնդիրներին ու նպատակներին: Դրանք ունեն տեսական, մեթոդական ու կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

1. Բացահայտվել է ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակը և, հիմք ընդունելով ՀՀ դիրքը միջազգային չափումներում, ՀՀ արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների վերլուծությունը, դրանց արդյունավետության գնահատումը և գործարարների շրջանում անցկացված հարցումները, միջազգային փորձին համահունչ մշակվել և տեղայնացվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի և արդյունավետության գնահատման ինդեքսը (Assessment of the infrastructural provision, այսուհետ՝ AIP), ինչը հնարավորություն կտա գնահատել ինչպես ընդհանուր, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության արտադրական և ոչ արտադրական ենթակառուցվածքների ապահովվածության մակարդակը և արդյունավետությունը:

2. Մշակվել է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման միջոցառումների համալիր, որն ուղղված է ֆինանսական ռեսուրսների հասանելիության, օրենսդրական կարգավորման,

հարկային, մաքսային և դատաիրավական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը, դրա գնահատման և վերլուծության տեսամեթոդաբանական մոտեցումները» վերտառությամբ գլխում բացահայտված է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության էությունը և ներկայացված են դրա հիմնական բաղադրիչները, ուսումնասիրված են ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատման տեսական և մեթոդաբանական մոտեցումները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության արդի վիճակի վերլուծությունը և արդյունավետության գնահատումը» վերտառությամբ գլխում իրականացվել են ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի արդի վիճակի վերլուծությունները, դրանց արդյունավետության գնահատումներն՝ ըստ հեղինակի կողմից առաջարկված դասակարգման: Մասնավորապես, վերլուծություններն ու գնահատումներն իրականացվել են ըստ արտադրական (արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության և տրանսպորտի) և ոչ արտադրական ենթակառուցվածքների (SS, զբոսաշրջության և բանկային):

Ատենախոսության երրորդ՝ «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարելավման գերակայությունները» վերտառությամբ գլխում կատարված է ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության գնահատում նոր մշակված AIP ինդեքսով և գնահատված է ՀՀ-ի դիրքը միջազգային ասպարեզում ըստ տվյալ ինդեքսի, ինչի հիմքով էլ առաջ են քաշվել ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի բարձրացման անհրաժեշտ ուղիներ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրակացություններ, որոնք ամփոփված են ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունն իր դրական արժանիքներով հանդերձ ունի որոշակի թերություններ: Դրանցից կարևորել ենք հետևյալները.

1. Աշխատանքում ուսումնասիրություններն իրականացվել են 2002-2019 թվականները ներառյալ ցուցանիշների հիման վրա: Պարզաբանման կարիք ունի, թե ինչու հետազոտության մեջ չեն ներառվել 2020 թվականի ցուցանիշները:
2. SS ենթակառուցվածքի հետազոտման ժամանակ հեղինակի կողմից իրականացվել են SS ոլորտի վրա ազդող ցուցանիշների ուսումնասիրություն: Կարծում ենք, որ այդ ենթակառուցվածքի հետազոտությունը թերի է և պակաս արժանահավատ, քանի որ հետազոտության մեջ չեն ուսումնասիրվել SS ենթակառուցվածքի վրա ազդող բազմաթիվ այլ կարևոր ցուցանիշներ ևս:
3. Հեղինակի կողմից աշխատանքում կատարվել են ենթակառուցվածքների առանձնացում արտադրականի և ոչ արտադրականի: Պարզաբանման կարիք ունի այն, թե ինչու է այդպիսի բաժանում իրականացվել և ինչ նպատակ է դա հետապնդում:
4. Աշխատանքի 2-րդ գլխում հեղինակի կողմից ենթակառուցվածքների գնահատումն իրականացվել է ռեգրեսիոն վերլուծությունների միջոցով: Աշխատանքը որակապես կշահեր, եթե այդ գնահատումն իրականացնել բազմագործոն ռեգրեսիայի միջոցով, ինչպես նաև՝ հիմնավոր մեկնաբանվեր ստացված արդյունքների տնտեսագիտական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արծրունի Էդվարդի Վարդանյանի «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը ներկայանում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որում տրված են ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատման համակարգի բարելավման, ինչպես նաև հանրապետության տնտեսության առողջացման ուղղված համակարգված առաջարկներ: Աշխատանքում տեղ գտած թերությունները էապես չեն ազդում աշխատանքի գիտական արժեքի վրա:

Հեղինակի գիտագործնական ընդհանրացումները, եզրակացությունները և առաջարկները նոր խոսք են և շոշափելի ներդրում ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատման մոտեցումների ուսումնասիրության

բնագավառում, ինչպես նաև դրանց արդյունքները երկրի տնտեսական զարգացման քաղաքականության մշակմանն ու իրականացմանը ծառայեցնելու առումով:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 11 հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդրկունություն:

Այսպիսով՝ Արծրունի Էդվարդի Վարդանյանի «Ձեռնարկատիրական գործունեության ենթակառուցվածքային ապահովվածության մակարդակի գնահատումը և բարձրացման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 11 հոդվածների հրապարակումները բավարարում են ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակն արժանի է Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (3.09.2021թ., արձանագրություն թիվ 5):

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու **Գ. Ոսկանյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտաշխատող, տնտեսագիտության թեկնածու **Տ. Փարսադանյան**

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի ՏԻ գիտաշխատող տնտեսագիտության թեկնած Գ. Ոսկանյանի և նույն ինստիտուտի գիտաշխատող տնտեսագիտության թեկնածու Տ. Փարսադանյանի ստորագրությունների իսկությունը «հաստատում եմ»

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. ՏԻ գիտ. քարտուղար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ք. Յու. Բաղդասարյան**

«03»սեպտեմբերի 2021թ.

Կ.Տ.